«ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԻՏԱԿՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԲԺՇԿԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ – 2020/16-18-ԵՊԲՀ

ք. Երևան «___» _____ 20 թ.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը, ի դեմս ռեկտոր Ա. Ա. Մուրադյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Գնորդ), մի կողմից, և <<Կոնցեռն-Էներգոմաշ>> ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Բ.Թադևոսյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Վաճառող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տասը)** օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **10 (տասը)** օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 3828820 (երեք միլիոն ութ հարյուր քսանութ հազար ութ հարյուր քսան) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն (ընդ որում՝ ԱԱՀ-ն հաշվարկված է 3-16 չափաբաժինների համար): Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **10** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է 16 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

<<ԳՆՈՐԴ>>	ՎԱՃԱՌՈՂ
<<Երևանի Մխիթար Հերացու անվան	«Կոնցեռն-Էներգոմաշ»ՓԲԸ
պետական բժշկական համալսարան>>	Հասցե՝ Ք.Երևան, Ազատության 26/8
Հիմնադրամ	Բանկ՝ «Ամերիա բանկ»ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	Հ/Հ 1570011489540100
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ	ՀՎՀՀ 01210095
հ/հ 11500166513800	Տնօրեն՝ Բ. Թադևոսյան
ՀՎՀՀ 01503448	BATIKYAN ARMINE 6103840430 Digitally signed by BATIKYAN ARMINE 6103840430 DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••, serialNumber=2e62ab58b3e5, cn=BATIKYAN ARMINE 6103840430 Date: 2020.07.30 16:10:59 +04'00'
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	
_____	_____
(ստորագրությունը)	/ստորագրություն/
Կ.Տ	Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.07.31 13:15:20 AMST

Հավելված N 1
« » 20 թ. կնքված
N ԳՀԱՊՁԲ – 2020/16-18-ԵՊԲՀ *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի											
հրավերով նախատես-ված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը և արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատակարարման		
									հասցեն	ենթակա քանակը	ժամկետը**
1	33141211	Արյան նմուշառման վակումային փորձանոթ	Արյան նմուշառման վակումային փորձանոթ VACUETTE® TUBE 5 ml CAT Serum Separator Clot Activator 13x100 red cap-yellow ring, PREMIUM Greiner Bio-One	Արյան նմուշառման փորձանոթ՝ մակարդման ակտիվացուցիչով և գել բաժանարարով: Փորձանոթի ծավալը՝ 5 մլ, չափսերը՝ 13 * 100 մմ: Կափարիչի տեսակը՝ պտուտակավոր: Փորձանոթի վրա առկա է նմուշառման ծավալի նիշը և թվով նշված ծավալը, պատվիրման կոդը, լոթ համարը, պիտանելիության ժամկետը: Փորձանոթի վրա պիտակի առկայություն՝ պացիենտի անուն/ ազգանուն, նմուշառման ամսաթիվ գրելու հնարավորությամբ: Փորձանոթները նախատեսված են միայն in vitro ախտորոշման համար և ունեն CE (Conformité Européenne) սերտիֆիկատ: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն:	հատ	78	78000	1000	Ք.Երևան, Կորյունի 2	1000	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
2	33141211	Վակումային փորձանոթի կցորդիչ՝	Վակումային փորձանոթի կցորդիչ՝	Վակումային փորձանոթի կցորդիչ՝ ստանդարտ, նախատեսված արյուն վերցնելու	հատ	65	65000	1000	Ք.Երևան, Կորյուն	1000	*Ապրանքի մատակարարում և*

		ասեղով	ասեղով VACUETTE® Multiple Use Drawing Needle 21G x 1 1/2 green, sterile, not made with natural rub. Greiner Bio-One	վակումային փորձանոթների համար: Փաթեթավորման վրա գրված է ապրանքային նշանը, ընկերության անվանումը, պատվիրման համարը, լոթը, ժամկետները, պահպանման պայմանները, CE (Conformité Européenne) սերտիֆիկատի առկայություն: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Կցորդչին համապատասխանող ասեղ՝ նախատեսված վակումային փորձանոթներով արյուն վերցնելու համար, 21G 1 1/2", ստերիլ: Պահպանման պայմանները՝ 4-36°C: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Ֆիրմային նշանի առկայություն և CE (Conformité Européenne) սերտիֆիկատի առկայություն: Կցորդիչն ու նմուշառման ասեղները նույն արտադրողի կողմից:					ի 2		*իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
3	33691162	Էլեկսիս Anti-SARS-Cov-2	Էլեկսիս Anti-SARS-Cov-2 Anti-SARS-CoV-2 Elecsys cobas e 200 Roche Diagnostics	Էլեկսիս Anti-SARS-Cov-2 ընդհանուր հակամարմինների որոշման թեստ հավաքածու Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 1 հատ տուփում 200 որոշման թեստ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Միայն in vitro ախտորոշման համար:	հատ	450000	2250000	5	Ք.Երևան, Կորյունի 2	5	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*

4	33691162	Էլեկսիս պրեսիկոնտրոլ Anti-SARS-Cov2	Էլեկսիս պրեսիկոնտրոլ Anti-SARS-Cov2 Anti-SARS-CoV-2 PC Elecsys Roche Diagnostics	Էլեկսիս պրեսիկոնտրոլ Anti-SARS-Cov2 Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 1 հատ տուփում 4x1մլ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Միայն in vitro ախտորոշման համար:	հատ	50000	150000	3	Ք.Երևան, Կորյունի 2	3	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
5	33691162	Էլեկսիս Պրոսել	Էլեկսիս Պրոսել ProCell Elecsys,cobas e Roche Diagnostics	Էլեկսիս Պրոսել (Elecsys procell) Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 1 հատ տուփում 6 x 380մլ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Միայն in vitro ախտորոշման համար:	հատ	25660	102640	4	Ք.Երևան, Կորյունի 2	4	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
6	33691162	Էլեկսիս Կլինսել	Էլեկսիս Կլինսել CleanCell Elecsys,cobas e Roche Diagnostics	Էլեկսիս Կլինսել (Elecsys Cleancell) Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 1 հատ տուփում 6 x 380մլ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Միայն in vitro ախտորոշման համար:	հատ	25660	76980	3	Ք.Երևան, Կորյունի 2	3	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
7	33141211	Էլեկսիս ծայրադիրներ	Էլեկսիս ծայրադիրներ ASSAY TIP ELECSYS	Էլեկսիս ծայրադիրներ (Elecsys Assay tips) Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային	հատ	47440	47440	1	Ք.Երևան, Կորյունի 2	1	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է*

			2010/cobas e411 Roche Diagnostics	անալիզ: Ֆորմատ՝ 1 հատ տուփում 30 x 120 = 3600 ծայրադիր: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Միայն in vitro ախտորոշման համար							*2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
8	33141211	Էլեկսիս միկրոկյուվետներ	Էլեկսիս միկրոկյուվետներ ASSAY CUP ELECSYS2010/cobas e411 Roche Diagnostics	Էլեկսիս միկրոկյուվետներ (Elecsys Assay cup) Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 1 հատ տուփում 60 x 60 = 3600 միկրոկյուվետ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ սենյակային ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Միայն in vitro ախտորոշման համար:	հատ	45710	45710	1	Ք.Երևան, Կորյունի 2	1	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
9	33691162	Սիսվոշ	Սիսվոշ Sys Wash Elecsys,cobas e Roche Diagnostics	Էլեկսիս սիսվոշ (Elecsys Syswash) Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 500 մլ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Միայն in vitro ախտորոշման համար:	հատ	5170	10340	2	Ք.Երևան, Կորյունի 2	2	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
10	33191310	Պոլիպրոպիլենային փորձանոթներ	Պոլիպրոպիլենային փորձանոթներ REACTION TUBE, 5 ML, PP	Պոլիպրոպիլենային թափանցիկ փորձանոթներ, փորձանոթին ամրացված փակվող կափարիչով, կոնաձև հատակով, նախատեսված աշխատանքային ծավալը՝ 5.0 մլ: Արտաքին մակերեսին բաժանարար գիծ՝	հատ	95	285000	3000	Ք.Երևան, Կորյունի 2	3000	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի*

			Greiner Bio-One	յուրաքանչյուր մլ-ի համար: Eppendorf: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն:							*ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
11	33691162	Ֆերիտինի քանակական որոշման թեստ հավաքածու	Ֆերիտինի քանակական որոշման թեստ հավաքածու Ferritin Elecsys cobas e 100 V2 Roche Diagnostics	Էլեկսիս Ֆերիտին (Elecsys Ferritin) Ֆերիտինի քանակական որոշման թեստ-հավաքածու: Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 1 հատ հավաքածուում 100 որոշման թեստ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ/ պլազմա: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Միայն in vitro ախտորոշման համար:	հատ	86000	86000	1	Ք.Երևան, Կորյունի 2	1	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
12	33691162	Էլեկսիս Ֆերիտին կալիբրատոր	Էլեկսիս Ֆերիտին կալիբրատոր Ferritin CS Elecsys V2 Roche Diagnostics	Էլեկսիս Ֆերիտին կալիբրատոր (Elecsys Ferritin CalSet) Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 1 հատ տուփում 4x1 մլ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Միայն in vitro ախտորոշման համար:	հատ	31490	31490	1	Ք.Երևան, Կորյունի 2	1	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
13	33691162	Էլեկսիս պրեսիկոնտրոլ Վարիա	Էլեկսիս պրեսիկոնտրոլ Վարիա PreciControl Varia Elecsys Roche	Էլեկսիս պրեսիկոնտրոլ Վարիա (Elecsys precicontrol Varia): Էլեկսիս և Կոբաս e 411 անալիզատորի համար: Մեթոդ՝ Էլեկտրոքեմիլումինեսցենտային անալիզ: Ֆորմատ՝ 1 հատ տուփում 4x3 մլ: Ֆիրմային նշանի	հատ	72000	72000	1	Ք.Երևան, Կորյունի 2	1	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի*

			Diagnostics	առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնելու պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Միայն in vitro ախտորոշման համար:							*ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
14	33691162	Դ-դիմերի որոշման թեստ հավաքածու	Դ-դիմերի որոշման թեստ հավաքածու D-Dimer Gen.2, 100Test, cobas c, Integra Roche Diagnostics	Tina-quant D-Dimer Gen.2, cobas Integra,cobas c կասետ Կոբաս ինտեգրա և Կոբաս U311 անալիզատորի համար: Ֆորմատ՝ 1 հատ հավաքածուում 100 որոշման թեստ: Ստուգվող նմուշ՝ արյան շիճուկ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները՝ 2-8°C ջերմաստիճանում: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Միայն in vitro ախտորոշման համար:	հատ	293220	293220	1	Ք.Երևան, Կորյունի 2	1	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
15	33691162	Դ-դիմերի կալիբրատոր	Դ-դիմերի կալիբրատոր D-Dimer Gen.2 Calibrator Set Roche Diagnostics	D-Dimer Gen.2 կալիբրատոր,Կոբաս U311 անալիզատորի համար: Ֆորմատ՝ 1 հատ տուփում 6x0.5 մլ: Պահպանման պայմանները 2-8°C ջերմաստիճանում: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Միայն in vitro ախտորոշման համար:	հատ	93000	93000	1	Ք.Երևան, Կորյունի 2	1	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա ընթացքում*
16	33691162	Դ-դիմերի կոնտրոլ	Դ-դիմերի կոնտրոլ D-Dimer Gen.2 Control I/II Roche Diagnostics	D-Dimer Gen2 control I/II կոնտրոլ Կոբաս U311 անալիզատորի համար: Ֆորմատ՝ 1 հատ տուփում 2 x 1 մլ: Ֆիրմային նշանի առկայություն: Պահպանման պայմանները 2-8°C ջերմաստիճանում: Հանձնման պահին պիտանելիության ժամկետի 1/2-ի առկայություն: Միայն in vitro ախտորոշման	հատ	142000	142000	1	Ք.Երևան, Կորյունի 2	1	*Ապրանքի մատակարարում և իրականացվում է 2020 թվականին՝ միանվագ կամ փուլային ըստ Պատվիրատուի ներկայացված պահանջի՝ 20 օրացույցային օրվա*

				համար:							*ընթացքում*

** Պարտադիր պայման է ապրանքի չօգտագործված լինելը:*
**Ապրանքի մատակարարման ժամկետը, իսկ փուլային մատակարարման դեպքում՝ առաջին փուլի մատակարարման ժամկետը, պետք է սահմանվի առնվազն 20 օրացուցային օր, որի հաշվարկը կատարվում է պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայմանն ուժի մեջ մտնելու օրը, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրված մասնակիցը համաձայնում է ապրանքը մատակարարել ավելի կարճ ժամկետում:*
**Մատակարարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN
2007720078
Date: 2020.07.31 13:15:48 AMST

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-Էներգոմաշ»ՓԲԸ
Հասցե՝ Ք.Երևան, Ազատության 26/8
Բանկ՝ «Ամերիա բանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570011489540100
ՀՎՀՀ 01210095
Տնօրեն՝ Բ. Թադևոսյան

BATIKYAN ARMINE
6103840430

Digitally signed by BATIKYAN ARMINE
6103840430
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••••,
serialNumber=2e62ab58b3e5, cn=BATIKYAN
ARMINE 6103840430
Date: 2020.07.30 16:11:15 +04'00'

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 2
« » 20 թ. կնքված
N ԳՀԱՊՁԲ – 2020/16-18-ԵՊԲՀ ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2020թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	33141211	Արյան նմուշառման վակումային փորձանոթ	-	-	-	-	-	-	-	78000	78000	78000	78000	78000	78000
2	33141211	Վակումային փորձանոթի կցորդիչ՝ ասեղով	-	-	-	-	-	-	-	65000	65000	65000	65000	65000	65000
3	33691162	Էլեկսիս Anti-SARS-Cov-2	-	-	-	-	-	-	-	2250000	2250000	2250000	2250000	2250000	2250000
4	33691162	Էլեկսիս պրեսիկոնտրոլ Anti-SARS-Cov2	-	-	-	-	-	-	-	150000	150000	150000	150000	150000	150000
5	33691162	Էլեկսիս Պրոսել	-	-	-	-	-	-	-	102640	102640	102640	102640	102640	102640
6	33691162	Էլեկսիս Կլինսել	-	-	-	-	-	-	-	76980	76980	76980	76980	76980	76980
7	33141211	Էլեկսիս ծայրադիրներ	-	-	-	-	-	-	-	47440	47440	47440	47440	47440	47440
8	33141211	Էլեկսիս միկրոկյուվետներ	-	-	-	-	-	-	-	45710	45710	45710	45710	45710	45710
9	33691162	Սիսվոշ	-	-	-	-	-	-	-	10340	10340	10340	10340	10340	10340
10	33191310	Պոլիպրոպիլենային փորձանոթներ	-	-	-	-	-	-	-	285000	285000	285000	285000	285000	285000
11	33691162	Ֆերիտինի քանակական որոշման թեստ հավաքածու	-	-	-	-	-	-	-	86000	86000	86000	86000	86000	86000
12	33691162	Էլեկսիս Ֆերիտին	-	-	-	-	-	-	-	31490	31490	31490	31490	31490	31490

		կալիբրատոր													
13	33691162	Էլեկսիս պրեսիկոնտրոլ Վարիա	-	-	-	-	-	-	-	72000	72000	72000	72000	72000	72000
14	33691162	Դ-դիմերի որոշման թեստ հավաքածու	-	-	-	-	-	-	-	293220	293220	293220	293220	293220	293220
15	33691162	Դ-դիմերի կալիբրատոր	-	-	-	-	-	-	-	93000	93000	93000	93000	93000	93000
16	33691162	Դ-դիմերի կոնտրոլ	-	-	-	-	-	-	-	142000	142000	142000	142000	142000	142000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

<<ԳՆՈՐԴ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան
պետական բժշկական համալսարան>>
Հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ «Հայբիզնեսբանկ» ՓԲԸ, Տերյան մ/ճ
հ/հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

_____
(ստորագրությունը)
Կ.Տ

ՎԱՃԱՌՈՂ
«Կոնցեռն-Էներգոմաշ»ՓԲԸ
Հասցե՝ Ք.Երևան, Ազատության 26/8
Բանկ՝ «Ամերիա բանկ»ՓԲԸ
Հ/Հ 1570011489540100
ՀՎՀՀ 01210095
Տնօրեն՝ Բ. Թադևոսյան

BATIKYAN ARMINE 6103840430
Digitally signed by BATIKYAN ARMINE 6103840430
DN: c=AM, sn=·····, givenName=·····, serialNumber=2e62ab58b3e5, cn=BATIKYAN ARMINE 6103840430
Date: 2020.07.30 16:11:27 +04'00'

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by MURADYAN ARMEN 2007720078
Date: 2020.07.31 13:19:54 AMST

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
N ԳՀԱՊՁԲ – 2020/16-18-ԵՊԲՀ *ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
N ԳՀԱՊՁԲ – 2020/16-18-ԵՊԲՀ *ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն